

Որակի հոչակագիր **ՀՆԱ-ի նախնական գնահատում ծախսային եղանակով, ընթացիկ և մշտական գներով**

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	ՀՆԱ-ի նախնական գնահատում ծախսային եղանակով, ընթացիկ և մշտական գներով
0.2	Ոլորտը	Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունք
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին Բաժնի պետ Լուսյա Խաչատրյան, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 52 39 96 Էլ. փոստ՝ <a href="mailto:lusya@armstat.am">lusya@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Հայաստանում ծախսային եղանակով հաշվարկված եռամսյակային համախառն ներքին արդյունքի հաշվարկի ներդրումը սկսվել է 1992 թվականից, երբ Հայաստանը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը, որին անցումը ենթադրում էր դրան բնորոշ հաշվարկային համակարգի ներդրում միջազգայնորեն ընդունված հիմնադրույթների, սահմանումների, դասակարգումների և հաշվապահական կանոնների (ԱՀՀ-93 և ԵՀՀ-95) ամբողջության հիման վրա: Սկսած 2014թ. ՀՀ վիճակագրական կոմիտեն Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրության բնագավառում իրականացրել է մեթոդաբանական փոփոխություն՝ անցում է կատարել «Ազգային հաշիվների համակարգ 1993-ից» «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի»:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Հայաստանի ծախսային եղանակով հաշվարկված եռամսյակային համախառն ներքին արդյունքի վերաբերյալ տվյալներն ունեն օգտագործողների լայն շրջանակ: Հիմնական օգտագործողների թվում են երկրի տնտեսական քաղաքականության և տնտեսական կանխատեսման գործառույթներ իրականացնող պետական մարմինները, ինչպես նաև այլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, գիտակրթական, ֆինանսավարկային կազմակերպությունները, գործարար միջավայրը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն՝ վերլուծությունների, մոդելավորման և կանխատեսումների նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Հաշվարկները հիմնվում են տարբեր աղբյուրների հիմնականում Արմստատի կողմից իրականացվող վիճակագրական

		<p>դիտարկումների արդյունքների վրա: Կազմակերպությունների ամսական, եռամսյակային և տարեկան դիտարկումներն օգտագործվում են ծախսային եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի որոշ բաղադրիչների հաշվարկման ժամանակ: Ի լրումն վերոնշյալի, օգտագործվում են նաև Արմատատի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները:</p> <p>Պետական կառավարման մարմինների ծառայությունների հաշվարկման համար օգտագործվում է ՀՀ ֆինանսների նախարարության (ՀՀ ՖՆ) կողմից տրամադրվող տեղեկատվությունը: ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) ստացվող տվյալներն օգտագործվում են տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի հաշվարկների իրականացման համար:</p> <p>Սպառողական գների ինդեքսը (ՄԳԻ), արտադրողների գների ինդեքսը (ԱԳԻ), ապրանքների արտահանման և ներմուծման ինդեքսներն օգտագործվում են դեֆլատավորման համար:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (ծանրաբեռնվածությունը)	Ռեսպոնդենտների ուղղակի ծանրաբեռնվածություն առկա չէ :
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>2010թ. Հայաստանի Ազգային հաշիվները կազմվում են համաձայն Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ-2008) հիմնարար դասակարգումների, սահմանումների և հասկացությունների, ինչպես նաև այլ մեթոդաբանական հիմքերի, միաժամանակ շարունակելով աշխատանքը Եվրոպական հաշիվների համակարգ (ԵՀՀ) 2010 ներդրման ուղղությամբ: Ընդգրկվում են ԱՀՀ-ում սահմանված բոլոր գործառնությունները: ՀՆԱ գնահատականը ներառում է բոլոր շուկայական գործառնությունները, ներառյալ ապրանքափոխանակությունը: Ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսությունը: Ծախսային եղանակով հաշվարկված ՀՆԱ-ն ըստ եռամսյակների կազմվում է ընթացիկ, սկսած 2011թ. 1-ին եռամսյակից՝ նախորդ տարվա միջին տարեկան և հղումային տարվա միջին տարեկան գներով: Բազային տարի է համարվում նախորդ տարին:</p> <p>Վերջնական սպառման ծախսերը հաշվարկվում են մանրածախ ապրանքաշրջանառության տվյալների՝ ճշգրտված չկազմակերպված</p>

		<p>շուկայում գնումների ծավալով, վճարովի ծառայությունների և անձնական սպառման համար արտադրության ծախսերի, բնակչության կողմից էլեկտրաէներգիայի, գազի, ջրի սպառման ծավալների, ֆինանսական հատվածի վիճակագրական տվյալների (ֆինանսական ծառայություններ), հարկային տվյալների, պետական կառավարման մարմինների և ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի հիման վրա: Տվյալները ճշգրտվում են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքների հիման վրա, ինչպես նաև, մասամբ հաշվի է առնվում արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ների միջև ընդհանուր հաշվեկշռի անհրաժեշտությունը: Նախորդ տարվա գներով գնահատականը տրվում է ընթացիկ գներով վերջնական սպառման և կուտակման բաղադրիչների դեֆլատավորման ճանապարհով՝ կիրառելով համապատասխան գների ինդեքսներ:</p> <p>Հիմնական կապիտալի կուտակումը հաշվարկվում է կապիտալ ներդրումների, կապիտալ վերանորոգման ծախսերի, երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերի, հիմնական հոտի կենդանիների/գլխաքանակի արժեքի հավելաճի, ծրագրային ապահովման և տվյալների բազայի ստեղծման ծախսերի, գրական և գեղարվեստական ստեղծագործությունների բնօրինակների ձեռքբերման ծախսերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև պետական բյուջեի հաշվին սարքավորումների, երկարատև օգտագործման առարկաների ձեռքբերման ծախսերի հիման վրա: Օգտագործվում են նաև վճարային հավեկշռի տվյալները:</p> <p>Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունը հաշվարկվում է կազմակերպությունների կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների տվյալների հիման վրա: Պաշարների արժեքի փոփոխությունը որոշվում է որպես պաշարներում ապրանքների մուտքագրման և դուրսգրման տարբերություն: Պաշարների փոփոխության արժեքից հանվում է պաշարներում գտնվելու ընթացքում գների փոփոխության արդյունքում ստացվող արտադրանքի արժեքը, այսինքն՝ գների փոփոխության ազդեցությունը (հոլդինգային շահույթ):</p> <p>Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման վերաբերյալ տվյալները վերցվում են վճարային հաշվեկշռի տվյալներից, որոնք կազմվում են «մաքոքային/ֆիզիկական անձանց կողմից իրականացված առևտրով» ճշգրտված մաքսային վիճակագրության տվյալների հիման վրա:</p>
--	--	--

		<p>Արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ի տարբերությունը հաշիվներում ցույց է տրվում որպես վիճակագրական շեղում:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հայաստանի Ազգային հաշիվները կազմվում են համաձայն Ազգային հաշիվների համակարգի հիմնարար դասակարգումների, սահմանումների և հասկացությունների, ինչպես նաև այլ մեթոդաբանական հիմքերի:</p> <p><b>Ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով</b> հաշվարկված ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումար: Այն ցույց է տալիս, թե ինչպես են տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները բաշխում իրենց տնօրինվող եկամուտը վերջնական սպառման և խնայողությունների միջև:</p> <p><b>Վերջնական սպառման ծախսերը</b> ձևավորվում են տնային տնտեսությունների, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև կոլեկտիվ և անհատական ծառայությունների ու ապրանքների համար կատարված պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերից: Այսպիսի խմբավորումը ցույց է տալիս, թե ով է ֆինանսավորում վերջնական սպառման ծախսերը:</p> <p><b>Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը</b> ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առևտրական կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և չկազմակերպված (փողոցային) առևտրի վայրերում, կենցաղային և բնակարանային-կոմունալ սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության և կրթության առևտրային հիմնարկներում՝ սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք ուղղված են տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման համար արտադրված և որպես աշխատանքի վարձատրություն բնեղեն տեսքով ստացած ապրանքների և ծառայությունների սպառմանը (բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայությունները):</p> <p><b>Պետական հիմնարկների կողմից անհատական բնույթի ապրանքների և ծառայությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը</b> բաղկացած են պետական հիմնարկների կողմից</p>

անհատական սպառման համար նախատեսված սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարած ծախսերից: Այսպիսի ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին:

**Պետական հիմնարկների կողմից կոլեկտիվ բնույթի ծառայությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսեր.** այս ցուցանիշը տարբերվում է նախորդից նրանով, որ այստեղ հաշվի են առնվում պետական բյուջեի հաշվին կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, որոնք բավարարում են ոչ թե առանձին տնային տնտեսությունների, այլ ամբողջ հասարակության պահանջմունքները (ծախսեր, որոնք ուղղված են պաշտպանությանը, կառավարմանը, ճանապարհային տնտեսությանը, բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող գիտական գործունեությանը, կոմունալ տնտեսությանը, գյուղատնտեսությունը սպասարկող կազմակերպությունների ծառայությունների մատուցմանը):

**Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերը** տնային տնտեսություններին անվճար տրամադրվող սպառողական ապրանքների ու ծառայությունների համար հասարակական կազմակերպությունների կողմից կատարած ծախսերն են: Դրանց մեջ ներառվում են նաև կազմակերպությունների կողմից իրենց աշխատողներին կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտում մատուցված անվճար ծառայությունները:

**Հիմնական կապիտալի համախառն կուտակումն** իրենից ներկայացնում է ռեզիդենտ-միավորների կողմից միջոցների ներդրումը հիմնական կապիտալ հանդիսացող օբյեկտներում՝ արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով ապագայում նոր եկամուտ ստեղծելու նպատակով:

**Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունն** ընդգրկում է արտադրական պաշարների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և վերավաճառքի համար նախատեսված ապրանքների պաշարների փոփոխությունը: Տվյալ ժամանակահատվածի ընթացքում պաշարների արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանի վերջին և սկզբին առկա պաշարների արժեքների տարբերություն՝ գնահատված դիտարկվող ժամանակահատվածի միջին շուկայական գներով՝ գների ազդեցությունը չեզոքացնելու նպատակով:

**Զուտ արտահանումը** հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերություն:

		Ծախսային եղանակով ՀՆԱ-ի հաշվարկման համար կիրառվել են ԱՀՀ-ի անհատական սպառման՝ ըստ նպատակների և պետական կառավարման մարմինների գործառնական դասակարգիչները:
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային տվյալների համար հաշվետու ժամանակահատվածը օրացուցային եռամսյակն է:
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ծախսային եղանակով հաշվարկված եռամսյակային ՀՆԱ-ի տվյալները հրապարակվում են հաշվետու եռամսյակին հաջորդող 51/53-րդ օրը, որոնք վերանայվում են նախորդ տարվա հաշվետու տարեկան տվյալների հիման վրա և հրապարակվում մայիսին: Հաշվետու եռամսյակային տվյալները հրապարակվում են հաշվետու տարվան հաջորդող երկրորդ տարվա մայիսի 5-ին, իսկ ամբողջական հաշիվները՝ չորրորդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Ընդհանուր առմամբ, տվյալների հավաքումն ու մշակումը համապատասխանում են եռամսյակային ազգային հաշիվների ժամանակային պահանջներին: Տվյալների հրապարակումը սովորաբար չի շեղվում սահմանված ժամանակացույցից:
2.4	Հաճախականությունը	Եռամսյակ՝ եռամսյակային պարբերականությամբ:
<b>3. Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Չհաշվառվող գործունեության և ստվերային տնտեսության մասով ճշգրտվում են թողարկման վերաբերյալ ներկայացվող տվյալները: Հաշվի առնելով տվյալների ոչ լրիվ ընդգրկունության փաստը, չներկայացումը կամ ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացումը, հաշվարկների հիմքում դրված են արտադրանքի թողարկման, զբաղվածների թվաքանակի և արտադրանքի արտադրության մասնակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալները, որոնք ստացվում են պարբերաբար հավաքվող վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջականացված հետազոտության և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքում: Ոչ ֆորմալ հատվածի ՀՆԱ-ում ունեցած մասնակցության չափը ներկայումս հաշվարկվում է կիրառելով 2009թ. իրականացված «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» հետազոտության արդյունքներով ստացված գնահատականները: Կիրառվում են նաև անուղղակի մակրոտնտեսական մեթոդներ՝ օգտագործելով տարբեր տարիներին իրականացված առանձին ոլորտների վերաբերյալ հետազոտությունների գնահատականները և այլ տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:
3.2	Անճշտության աղբյուրները	Ազգային հաշիվներում տվյալների հնարավոր անճշտությունը կապված է տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների անհամապատասխանության հետ:
3.3	Ճշգրտության չափումները/	Արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված եռամսյակային ՀՆԱ-ի տարբերությունը հաշիվներում ցույց է տրվում

	չափելիությունը	որպես վիճակագրական շեղում:
<b>4. Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Այն դեպքերում, երբ իրականացվում են մեթոդաբանական կամ այլ բնույթի փոփոխություններ (օրինակ, բազային տարվա փոփոխություն, համապատասխան հրապարակումներում տրվում է այդ փոփոխությունների ծանոթագրությունները, ինչպես նաև ներկայացվում նախորդ տարիների համար հաշվարկված (վերանայված) շարքեր:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ վիճակագրական համակարգերի հետ, ինչպես օրինակ՝ Վճարային հաշվեկշիռը, ֆինանսների վիճակագրությունը և այլն:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Ծախսային եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի եռամսյակային նախնական տվյալները վերանայվում են տարեկան վերջնական հաշվետու տվյալների հիման վրա:
<b>5. Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<p><b>Հրապարակումներ</b>  <b>Ամսական հրապարակում</b>  «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում (հայերեն, ռուսերեն) հրապարակվում են ՀՆԱ-ի վերաբերյալ հետևյալ եռամսյակային տվյալները՝</p> <p>ա) եռամսյակային ՀՆԱ՝ ծախսային եղանակով, ըստ վերջնական սպառման բաղադրիչների (վերջնական սպառման բաշխումն ըստ տնային տնտեսությունների վերջնական սպառման, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների սպառման, որտեղ վերջին տարրն, իր հերթին, տարանջատվում է անհատական և կոլեկտիվ սպառման, ինչպես նաև կապիտալի համախառն կուտակումն ըստ հիմնական կապիտալի համախառն կուտակման և շրջանառու նյութական պաշարների փոփոխության) ընթացիկ գներով, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համադրելի գներով (2011թ-ի 1-ին եռամսյակից նախորդ տարվա միջին տարեկան գներով), ինչպես նաև նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ֆիզիկական ծավալի ինդեքսները և ՀՆԱ-ի կառուցվածքը, իսկ սկսած 2011 թվականից՝ նաև ֆիզիկական ծավալի շղթայակապ ինդեքսների ժամանակագրական շարքերը:</p> <p>բ) ծախսային եղանակով հաշվարկված եռամսյակային ՀՆԱ՝ բազային տարվա միջին տարեկան (մշտական) գներով, ինչպես սեզոնային ճշգրտմամբ, այնպես էլ առանց սեզոնային ճշգրտման և ըստ վերջնական սպառման տարրերի:</p>

		<p><b>Տվյալների բազաներ</b>  <a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p> <p><b>Ինտերնետային հասցե</b>          Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով.  <a href="http://www.armstat.am">http://www.armstat.am</a>          Տվյալների բազայի Ազգային հաշիվների բաժնում  <a href="http://www.armstat.am/am/?nid=263">http://www.armstat.am/am/?nid=263</a></p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Բոլոր հրապարակումները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորումը	<p>Ցուցանիշների վերաբերյալ հակիրճ մեթոդաբանական պարզաբանումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի եռամսյակային հրապարակումներում, իսկ առավել մանրամասն՝ «Հայաստանի Ազգային Հաշիվները» վիճակագրական ժողովածուում:</p> <p>Արմստատի պաշտոնական կայքի «Վիճակագրություն» հատվածի «Մեթատվյալներ ենթահատվածում առկա է նաև լրացուցի փաստաթղթավորում Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտին համապատասխան, հայերեն, ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով՝  <a href="https://www.armstat.am/am/?nid=549">https://www.armstat.am/am/?nid=549:</a></p>
5.4	Այլ տեղեկատվություն	Այլ տեղեկատվություն առկա չէ:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝  <a href="https://www.armstat.am/am/?nid=672">https://www.armstat.am/am/?nid=672:</a></p>